№ 26 ԱՊՐԻԼԻ 18 (30) 1877 ԱՊՐԻԼԻ 18 (30) № 26

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 7 րուբլ, կէս տարվանը 4 րուբլ։

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը, պ. Ծատուրեանի և Արասխանեանի խանութում

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ"

# ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողին 2 կօպէկ։

„ՄՇԱԿ" լրագրի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ խնդրում է այն բաժանորդներին, որոնք այս ամբողջ տարվայ կամ կէս տարվայ բաժանորդական գինը լրվին չեն տուել խմբագրութեանը, շտապել լրացնել իրանց բաժանորդագինը։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պատերազմ։—Ներքին տեսութիւն։ Պատերազմական բեմից։ Մի քանի խօսք մեր թղթակիցների մասին։ Նամակ Մօզդօկից։ Նամակ Բագուից։ Նամակ Ղզլարից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Քաղաքական տեսութիւն։ Նամակ խմբագրին։ Արտաքին լուրեր։—Խառն լուրեր։—Յայտարարութիւններ։—Տեղեկացոյց։—Բանասիրական. Մատենագրութիւն։

## ՊԱՏԵՐԱԶՄ

Երկար ժամանակ սպասած պատերազմը յայտնված է ուրեմն և արդէն սկսված է։

Թագաւոր Կայսրը յայտնել է զօրքին Տիրասպոլի մէջ հետևեալ նշանաւոր խօսքերը, ինչպէս հաղորդում է «Правит. Вѣстн.» լրագիրը։ «Ես աշխատում էի գցել ձեզ գործի մէջ, այդ պատճառով, Ես, որքան կարելի էր, ուշացնում էի։ Ափսոս էր թափել ձեր Ինձ համար թանգագին արիւնը, բայց մի անգամ որ Ռուսաստանի պատիւը ձեռնամուխ է եղած, Ես հաւատացած եմ որ ամենքս մինչև վերջին մարդը կիմանանք պաշտպանել նրան։» «Աստուած ձեզ հետ է, ցանկանում եմ ձեզ կատարեալ աջողութիւն։»

Այժմ աւելորդ են ուրեմն դատողութիւններ։ Քրիստոնեաների պաշտպանութեան գործը ընդդէմ մահմետական տարրի բարբարոս ճնշման, այն անվերջանալի արևելեան խնդիրը Թագաւոր Կայսրի կամքով կը վճռվի ոչ թէ անորոշ դիպլօմատիական բանակցութիւններով, այլ սրով և արիւնով։

Սկզբունքով կարելի է համակրել կամ չը համակրել պատերազմին, բայց մէկ բան չէ կարելի չը խոստովանել, որ կան ազգեր, որոնք ենթարկվում են նոր մտքերին, ընդհանուր մարդկային առաջադիմութեան անհրաժեշտութիւնը ընդունում են միայն սրի և հրացանի միջոցով հասցրած լինելով այդ անհրաժեշտութեանը։ Կան հարցեր, որոնք այլ կերպ չեն կարող վճռված լինել, եթէ ոչ պատերազմի միջոցով։

Թիւրքիան պատկանում է այդ տեսակ ազգերին, արևելեան խնդիրը այդ տեսակ դժուար լուծելի խնդիրներից մինն է....

Եթէ այսօր չը լինէր պատերազմ, նա մի օր լինելու էր։ Արևելեան խնդիրը առանց պատերազմի երբէք չէր կարող իր լուծումն ստանալ։

Ռուսաց զօրքը հանդէս է դուրս գալիս պատերազմական բեմի վրա ճնշված ազգերը, քրիստոնէութիւնը, ազատութիւնը և ընդհանուր մարդկային առաջադիմութիւնը և լուսաւորութիւնը պաշտպանելու դիտաւորութեամբ։

Ցանկանանք մեր զօրքերին աջողութիւն, որից կախված է արևելքի ազատութիւնը, նրա բնակիչների խաղաղ, ապահով դրութիւնը և երկար ժամանակ ճնշման տակ մնացած քրիստոնեայ ազգերի բարոյական, տնտեսական և մտաւոր վերանորոգութիւնը։

Ռուսաց զօրքերը կոչումն ունեն այս բոպէիս եւրօպական քաղաքակրթութեանը մի լայն ճանապարհ բաց անելու դէպի արևելքը։

Գ. Ա.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԲԵՄԻՑ

Պատերազմը յայտնված է Թիւրքիայի դէմ և արդէն սկսված է։ Սահմանների վրա կանգնած զօրքերը անցկացան Թիւրքաց պետութեան սահմանները։ Շարժումը սկսվեցաւ ապրիլի 12-ին։ Բոլոր կէտերի վրա ռուսաց զօրքերը անցան սահմանը և առ ժամանակ պատահելով միայն Թուրք պահապան զօրքերին, այդ վերջինների մեծ մասը անձնատուր եղան մեր զօրքերին գրեթէ առանց ընդդիմութեան։ Միայն Ջելաբ—Կիչութ անուանված տեղի մէջ Թուրքաց սուվարի անուանված զինուորականները փորձեցին ընդդիմադրութիւն անել, բայց այդ պատճառով պատահած կռւի մէջ Թուրքերի կողմից 4 մարդ սպանվեցան։ Ռուսների կողմից սպանվեցաւ մի կազակ։ Մեր զօրքը առաջ գնալով ճանապարհում պատահեց քուրդերի ձիաւորներին, որոնք փոքր ինչ ընդդիմադրութիւն անելուց յետոյ, յետ քաշվեցան։ Թիւրքաց 7 օֆիցէրներ և 97 հասարակ զինուորականներ (սոլդատներ) ռուսների ձեռքը գերի ընկան։ Ապրիլի 12-ին 200 Թուրք ձիաւորներ անձնատուր եղան Ալէքսանդրապօլի մօտ կանգնած ռուսաց զօրքերի գլխաւոր կառավարչին։ Այդ երկու հարիւր մարդիկ խնդրում են որ ռուսները ընդունեն նրանց իրանց զօրքի ծառայութեան մէջ։—«Кавказъ» լրագրում կարդում ենք, որ Ռիօնի զօրքերի կառավարիչ, գէնէրալ Օկլօբժիօ հաղորդեց որ ապրիլի 13-ին, երեկոյեան 6 ժամին զօրքը գէնէրալ Դէնիբէկօվի առաջնորդութեամբ երկար և ծանր կռւից յետոյ վեր առաւ Թիւրքերից Թողած ամրացած բանակը Մուխստատէի մօտ։ Այդ զօրքի այն մասն է, որ Օզուրգէթից անցաւ Թիւրքիայի սահմանը։ Այդ ճակատամարտի մէջ բացի կանօնաւոր զօրքերից մեծ քաջութեամբ էր կռւում Գուրիայի միլիցիան։ Մեր կողմից սպանվեցան մինչև 30 մարդ։ Պօդպօլկօվնիկ Մուսխէլօվ վիրաւորված է։ Ճանապարհները և դիրքը շատ դժուար են կանօնաւոր շարժման համար։—Սուրբ Նիկօղայոսի բերդից (որ գտնվում է Օզուրգէթից ոչ հեռու Թիւրքաց սահմանի վրա) հաղորդում են որ Թիւրքաց նաւերը ռմբակոծում են այդ ամրացած տեղը։

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Մայրենի լեզու, դասագիրք ընթերցանութեան ազգային ուսումնարանների համար։ Յարմարեցրած աշակերտների աստիճանաբար զարգացմանը և դիտողարար բնութեան երևոյթներին և պատմական պատկերներին ծանօթանալուն։ Գ. և Դ. տարի. Թիֆլիս. 1877 թ. Աշխատասիրութիւն Նիկ. Տէր-Ղևոնդեանի. տպարան Մարտիրոսեանի։

(Շարունակութիւն և վերջ)

Ութերորդ վարժութեան սկզբում, որով պարոնը սկսում է պատմաբանական մասը, խօսքը մարդու ստեղծագործութիւնից վեր առնելով այսպէս է խօսում. «Գեղեցիկ էր նախաստեղծ աշխարհը, երբ դեռ նոր էր գոյացել Աստուծոյ խօսքով, բայց նորա վերա դեռ ևս մարդ չը կար և ոչ ոք էր, որ նորա գեղեցկութիւններով զուարճանար։ Ցերեկը փայլուն արեգ բարձրանում էր երկինքը և թափում էր երկրի վրա լոյս և ջերմութիւն. գիշերը երևում էր համեստ լուսինը և փայլում էին անհամար աստղեր. երկնքի կապոյտ կամարը՝ զարդարուած ոսկեփայլ և արծաթանման ամպերով, բարձր տարածում էր իւր հրաշալի անսահման վրանը. ալեկոծում և վրդովւում էր անեզր ծովը. բարձրագոյն լեառները իրանց ձիւնափայլ գագաթներն ամպերից վեր էին բարձրացնում. ամենայն կողմը հոսում էին յորդառատ կապոյտ գետեր. եռում-ցանում էին իրանց ցայտունքը ջրվէժներ կազմելով. խոխոջում էին փրփրալից առուները հոսելով անուշահոտ և հիւթալի խոտերի վերայով.... Խայտապիսակ թռչունները և փայլուն միջատները անդադարդի նման ցողալով սլանում էին օդի մէջ. սոխակը հնչում էր իւր բարձրաձայն երգը.—բայց դեռ չէր ստեղծուած մարդը և ոչ ոք էր, որ վայելէր աշխարհիս բոլոր փարթամութիւնները....

Տեսնելով թէ որքան գեղեցիկ է աշխարհս, Աստուած, լի անսպառելի սիրով, կամեցաւ ստեղծել մի էակ, որը իւր անմահ հոգով նմանուէր տիեզերքի Արարչին, սակայն և որը կատարէր նորա օրէնքը, ոչ թէ կարիքից ստիպուած, որպէս միւս անբան արարածները, այլ հասկանալով այդ օրէնքի զգօնութիւնը և քաղցրութիւնը....

«Արասցուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան—ասաց Տէրը—և ստեղծելով հողից անչափ գեղեցիկ մարմին ներշնչեց նորա մէջ իւր աստուածային բերանից բանիմաց հոգի։ Մարդը բացաւ աչերը, զարմացած և հիացած նայեց նա աշխարհին, և նորա հոգին, զգալով իւր աստուածային ծագումը, լցուեցաւ երջանկութեամբ, երախտապարտութեամբ և սիրով դէպի իւր ստեղծողը...»

Այն աշխարհը, ուր ապրում էին նախաստեղծ մարդիկը, գտնվում էր այն գեղեցիկ ու հարուստ երկրի վրա, ուր հոսում են Տիգրիս, Եփրատ, Ճորոխ և Երասխ գետերը, ուր բարձրանում էր ծերունին Մասիս, որտեղից տարածուեցաւ մարդկային ցեղը։ Բայց աւաղ, այն գեղեցիկ աշխարհը, այն փարթամ դրախտային վայրերը այժմ շատ տեղերում ամայի և անշուք են։ Նախնի փառահեղութիւնների և հարստութիւնների տեղը հոյակապ քաղաքների տխուր աւերակներն են մնացել։ Արեգակը և երկնային լուսաւորները փայլում են նոյն փառահեղութեամբ. բայց մեր նախահայրերի դրախտը կորցրել է իւր ճոխութիւնը (եր. 259—261.)

Մի հատուած ևս առաջ բերենք իսկ պատմութիւնից.

Վռամշապուհ (401—421 թ.)

Տրդատի մահից յետոյ Հայաստանը կռւի և երկպառակութեան ասպարէզ է դառնում։ Մենք հրաժարվում ենք սուրբ մարդու անարժան յաջորդների նկարագրութիւնն անելուց, մանուկ ընթերցողներ, հաւատացած լինելով, որ դուք նոցանից օգուտ չէք ստանալ։ Եթէ դուք խորշում էք վատութիւնից և ատում էք անարժաններին իրանց անվայել գործերով, ապա բաւական է ձեզ իմանալ, որ նորանք ոչինչ բանով նման չէին այն թագաւորներին, որոնց պատմութեան հետ դուք համառօտապէս ծանօթացաք։ Այնու ամենայնիւ ես խորհուրդ եմ տալիս ձեզ, որ դուք, երբ կը մեծանաք և ձեր հայրենիքի պատմութեանը մանրամասնաբար ծանօթանալու ցանկութիւն և կարողութիւն կունենաք, ուշադրութեամբ կարդաք այն մարդկանց պատմութիւնները, որոնք իրանց կառավարութեամբ աւելի վնասակար են եղել հայրենիքին, քան օգտակար. լաւի և վատի, արժանաւորի և անարժանի անաչառ համեմատութիւնից յետոյ, կարող էք դուք արժանաւոր և վայելուչ ուղղութիւն տալ ձեր կեանքին։ Այս միայն իմացէք, որ ամենայն ազգի պատմութեան մէջ պատահում են այնպիսի ժամանակամիջոցներ, երբ ազգի թագաւորների, իշխանների, այս կամ այն կուսակցութիւնների մէջ տարաձայնութիւններ են ընկնում և տարաձայնութիւնները հասնում են ներքին և արիւնահեղ պատերազմների, ուր եղբայրը եղբօր դէմ է պատերազմում, ուր հայրը սպանում է որդուն։ Այսպիսի պատահարներ ներկայացնում է մեզ մինչև անգամ այժմեան լուսաւորեալ ազգերի պատմութիւնը... (եր. 307—308).

Պարոնի աշխատասիրութեան մէջ նոյնպէս պատահում ենք մի քանի նորակազմ բառերի, որոնք մեր կարծիքով բաւականին յարմարութեամբ են գործածած. այդպիսիքն են օրինակ. լեռնահանք, մետալահանք, տարագնաց թռչուններ, կապարաքար, տարր և այլն։

Անցնենք այժմ մի երկու խօսքով էլ ցոյց տալու պ. Տէր-Ղևոնդեանի նոր աշխատութեան պակասաւոր կողմերը։

Եթէ իսկապէս մեր տարրական ուսումնարանների փրկութիւնը դասարանական կազմութեան մէջ է, որի մասին մենք չենք էլ կասկածում, եթէ մի և նոյն ուսուցիչը պիտի դասախօսէ ազգային տարրական ուսումնարանում գիտութեան բոլոր առարկաներից, ապա մեր ուսումնարանների ներկայ կազմակերպութեանը և նոցա նախապատրաստութեան անբաւարարութեանը նայելով պէտք էր և լաւ էր որ այդ ուսումնարանների համար կազմած գրքերի մէջ նիւթերի դասաւորութիւնը լինէր, այնպէս որ գիտութեան առարկաները չընթանային այլ և այլ ճանապարհով և անկախ մէկ մէկուց, այլ կապուած լինէին այնպէս, որ նորանց մինից դէպի

